ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 1
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

ք. Եղեգնաձոր 28.04.2017թ.

Մարզխորհրդի նիստը նախագահում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը
Քարտուղարում էր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Հ. Կարապետյանը

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ մարզպետի տեղակալները, աշխատակազմի ղեկավարը,ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության սննդամթերքի արտադրության վերահսկողության բաժնի պետ՝ Առուշան Ալթունյանը,տարածքային զինկոմները, համայնքների ղեկավարներ, աշխատակազմի քարտուղարներ,հանրակրթական դպրոցների տնօրեններ,հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, նիստին հրավիրված ու մասնակցում են նաև՝ մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ ու ԶԼՄ ներկայացուցիչներ:
Մարզպետը մարզխորհրդի մասնակիցներին ներկայացրեց օրակարգը՝

1. ,,Ազգ-Բանակ 2017թ միջոցառման մասին,,

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյան/
2. ,,,,2017թ առաջին եռամսյակում համայնքային բյուջեների ամրագրված սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները,,:

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Շ. Վարդանյան/
3. ,,Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացը մարզի համայնքներում,,

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Ներսիսյան/

Հայտարարություններ

1. ,, Վերջին դաս միջոցառման մասին,,:

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյան/
2. ,,Շախմատ առարկայի դասավանդման դրվածքը մարզի հանրակրթական դպրոցներում,,

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյան/

3. ,,Լավագույն մարզական ընտանիք միջոցառման մասին,,

   /Զեկ. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյան/
4. ,, Հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվող սննդի անվտանգության նորմերի մասին,,

   /Զեկ. ՀՀ ԳՆ սննդամթերիքի անվտանգության պետական ծառայության Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ Հ. Ավագյան/

Օրակարգի առաջին հարցի շուրջ ,, Ազգ-Բանակ 2017թ միջոցառման մասին ,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա.Ղազարյանը, վերջինս նշեց, 2017 թվականի ապրիլի 20-ին Երևանի ծիծեռնակաբերդի մարզահամերգային համալիրում տեղի ունեցավ Ազգ բանակ 2017թ. համաժողովը: Այս միջոցառմանը ներկա էր և ելույթ ունեցավ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը:

Ելույթ ունեցան ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ Պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը: Ազգ բանակ 2017թ. համաժողովի գլխավոր նպատակը, որն ընդգծված ձևով երևաց ամբողջ համաժողովի ընթացքում մեր երկրի առաջ կանգնած կարևորագույն մարտահրավերն է Հայոց նորանկախ բանակի առջև ծառացած խնդիրների լուծումը:

2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը ցնցեց մեր ամբողջ հասարակությանը: Այն ցույց տվեց թե ինչպիսի հերոսության են ընդունակ մեր 18-20 տարեկան երիտասարդները, մենք համոզվեցինք, որ մեր ազգը այն հազվագյուտ ժողովուրդներից է, որն իզորու է մեկ օրում դառնալու Ազգ բանակ:

2017թ. ապրիլի 20-ի համաժողովին նախանշվեցին մի շարք նոր ծրագրեր, որոնք կյանքի կոչելով էլ ավելի կամրապնդենք Ազգ բանակ գաղափարը:

Հարգելի գործընկերներ, ՀՀ Պաշտպանության նախարարը ներկայացրեց նոր մարտահրավերների մի քանի դրույթներ, որոնք ցանկանում եմ ներկայացնել ձեզ:

1. Առաջին ծրագիրը կոչվում է <<Պատիվ ունեմ>>, այս հարցադրումը ամբողջությամբ նվիրված էր Հայոց բանակում սպայի դերի բարձրացմանը, բայց միաժամանակ նշվեց, թե դա ինչպես պետք է անել: ՀՀ նախագահը իր ելույթում հատուկ շեշտեց, որ մինչև 2019թ. պետք է հնարավորինս ավարտին հասցնել բանակում ծառայող սպաներին բնակարանով ապահովելու հարցը, իսկ ՀՀ Պաշտպանության նախարարը կոնկրետ նշեց, թե ինչպես պետք է իրականացնել այդ ծրագիրը: Իհարկե այդ ծրագիրը պատք է իրականացնենք մենք բոլորս համատեղ:

Օգտվելով առիթից, որ մեր նիստին մասնակցում են նաև դպրոցների տնօրեններ,ասեմ որ այդ ծրագրի առաջին մասը վերաբերվում է մեզ, մենք պետք է ամեն ինչ անենք, որ մեր շրջանավարտներին ուղղորդենք սովորելու հանրապետությունում գործող և հանրապետությունից դուրս գտնվող ռազմական ուսումնական հաստատություններում: Թվում է թե այդ գործը մենք մի քիչ կատարել ենք, ունենք որոշակի արդյունք, բայց դա շատ քիչ է: Այս պահի դրությամբ ռազմական ուսումնական հաստատություններում մեր մարզից սովորում եմ 34 ուսանողներ: Համաժողովում հարց բարձրացվեց, որ յուրաքանչյուր դպրոց ստանում է հատուկ առաջադրանք այդ ուղղությամբ, կոնկրետ մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցները մեկ դիմորդ, 100-200 աշակերտի դեպքում երկու և ավելի, 300-ից բարձրի դեպքում մինչև չորս դիմորդ, սա չի արվելու կամայական, այլ պետք է արվի նուրբ ամենօրյա աշխատանքով, աշխատանք պետք է տարվի նաև ծնողի հետ:

Պատիվ ունեմ ծրագրի մի առանձին բաղկացուցիչ մաս է, բուհ ընդունված և հետագայում ընդունվող այն ուսանողներին, որոնք օգտվում են տարկետման իրավունքից: Նրանք իրենց ցանկությամբ կարող են շաբաթ և կիրակի օրերին հաճախեն Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան, ավարտելուց հետո ստանալ սպայի կոչում և անցնել վճարովի ծառայության ամսական 260000դրամ աշխատավարձով, սպայի կոչմամբ երեք տարի ժամկետով: Ծառայությունն ավարտելուց հետո ինքն է որոշելու շարունակել ծառայությունը, թե անցնել քաղաքացիական ծառայության,

2. Ծրագիրը կոչվում է <<Ես եմ>>. խոսքը վերաբերվում է պարտադիր զինվորական ծառայողներին: 6 ամիս պարտադիր ծառայությունից հետո զինվորը կամավոր կարող է ընդգրկվել այդ ծրագրում, ամսվա ընթացքում յուրաքանչյուր երկու շաբաթ առաջին գծում ծառայելուց հետո նրան տրվում է մեկ շաբաթ հանգիստ, որի ընթացքում կարող է այցելել տուն և այսպես շարունակ, ճանապարհածախսը հոգում է պետությունը: Ծառայությունից հետո զինվորը իր անձնական հաշվին ունենում է 5 մլն դրամ՝1. բնակարան գնելու, 2.ուսման վարձ վճարելու, 3.բիզնես ոլորտում ներդնելու նպատակով:

Հարգելի գործընկերներ, մեր խնդրանքը ձեզ, հասարակության հետ տանել լայն բացատրական աշխատանքներ, եթե կարող են լինել նոր առաջարկություններ կարող եք ներկայացնել տարածքային զինվորական կոմիսարիատներ:

Կարծում եմ Ազգ բանակ գաղափարը օրվա հրամայականն է և այստեղ անելիք ունենք բոլորս:

Համաժողովում նաև հնչեցվեց այն կարևորագույն գաղափարը, որ մենք ամբողջությամբ պետք է փոխենք մեր դպրոցներում ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը,փոփոխություն պետք է կատարվի ռազմագիտության դասագրքերում, զինղեկների աշխատանքներում, վերջինս կրում է ձևական բնույթ:

Հարգելի գործընկերներ դպրոցում պետք է կրթենք ու դաստիարակենք բանակին պիտանի շրջանավարտներ: Ուզում եմ ավելացնել, որ համաժողովում հնչեցվեց նաև մի շատ կարևոր հարց: Դիլիջանում այս տարվանից գործելու է Մոնթե Մելքոնյանի անվան ավագ դպրոց-վարժարանը, որտեղ ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմաններ՝ սնունդ, կացարան, 9 ամյա կրթություն ստացած գերազանց և հարվածային առաջադիմություն ունեցող բոլոր տղա երեխաները կարող են սովորել այդ ավագ դպրոց վարժարանում: Համաժողովին ներկա էին մեր մարզի բոլոր դպրոցների տնօրեններ, զինղեկներ, նրանց բաժանված է տեսահոլովակներ այդ դպրոցի պայմանների վերաբերյալ, անհրաժեշտ է այն տեղայնացնել դպրոցականների և ծնողների շրջանում:

Ինձ մնում է ավելացնել, որ մենք բոլորս պարտավոր ենք գիտակցել, որ մեր երկրի անվտանգության երաշխավորը հայոց հզոր բանակն է, իսկ այս ծրագրերի իրականացնողը՝ մենք, մնում է, որ դա ապացուցենք գործով:

Այդ ծրագրերի իրականացման աշխատանքներին մարզպետարանը հետամուտ է լինելու և ես համոզված եմ, որ մենք կզինվորագրվենք այդ ծրագրերի իրականացմանը և այն կկատարենք պատվով:

Զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակմանը մասնակցեցին **տարածքային զինկոմներ՝** փոխգնդապետ Բաբայանը և մայոր Մելքոնյանը, վերջիններս կարևորեցին քննարկվող հարցը ու առաջարկեցին հաջողության հասնելու նպատակով մեկտեղել ջանքերը:

Ամփոփիչ խոսքով հանդես եկավ մարզպետը, վերջինս նշեց 2017թ. ապրիլի 20-ի **Ազգ Բանակ** համաժողովում մեր բանակի հետագա հզորացման համար առաջարկվեցին կոնկրետ նոր ծրագրեր: Այդ ծրագրերից առաջինը կոչվում է << **Պատիվ ունեմ**>>:

Ծրագրի նպատակը՝ մեր հասարակության մեջ բարձրացնել սպայի դերը, ստեղծել նրա համար նորմալ բնակարանային պայմաններ, բարձրացնել նրա աշխատավարձը: Անել ամեն ինչ, որպեսզի բուհերի առաջին կուրսեցիները անկախ բուհից և մասնագիտությունից սովորելուն զուգահեռ շաբաթ կիրակի օրերին այցելեն Վ. Սարգսյանի անվան համալսարան և վերջում ստանան սպայական կոչում:

Շատ կարևոր է նաև երկրորդ ծրագիրը <<**Ես եմ**>>, որի իրականացումը մեզանում նույնպես շատ եմ կարևորում:

Ես ձեզ բոլորիդ կոչ եմ անում, պահանջում եմ, որպեսզի դուք լուրջ վերաբերվեք այս ծրագրերի իրականացմանը, շատ բան կախված է մեզանից:

Այս ծրագրերի հսկողության դեպքում մենք էլ ավելի կնպաստենք մեր բանակի հզորացմանը: Ազգ բանակ գաղափարը նոր գաղափար չէ, ուղղակի այսօր այն դառնում է օրվա հրամայականը:

Մենք ամեն ինչ պետք է անենք, որ օրեցօր հզորանա մեր բանակը, դրա համար դպրոցը, համայնքը և քաղաքական բոլոր կառույցները պետք է գործեն համատեղ: Մենք չունենք այլընտրանք, մեր երկիրը մենք պետք է պաշտպանենք:

Օրակարգի երկրոդ հարցը ներկայացնելու համար նախագահողը ամբիոնի մոտ հրավիրեց ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ Շ.Վարդանյանին, վերջինս նշեց,որ 2017 թվականի երեք ամիսների ընթացքում մարզի 29 համայնքների տեղական բյուջներով եկամուտներ են նախատեսվել 395504.0 հազ. դրամ, տեղական բյուջեներին ամրագրված եկամուտներից հավաքագրվել է 403342.0 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը կատարվել է 102.0%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 142807.0

հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 149644.0 հազ. դրամ, գերակատարվել է 6837.0 հազ. դրամով կամ կատարվել է 104.8%-ով: Աճը 2016թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 30553.0 հազ. Դրամ:
Համահարթեցման կարգով ՀՀ 2017թ. պետական բյուջեից մարզի համայնքներին առաջին եռամսյակի համար նախատեսվել է 248701.4 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Հարկային եկամուտների, տուրքերի և ոչ հարկային եկամուտների գծով երեք ամիսների համար համայնքների բյուջեներով նախատեսվել և առ 01.04.2017 թվականի դրությամբ կատարվել է՝

- Հողի հարկ՝ 12712.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 13438.0 հազ. դրամ, գերակատարվել է 726.0 հազ. դրամով կամ կատարվել է 105.7%-ով:
- Գույքահարկ՝ 35803.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 41154.0 հազ. դրամ, գերակատարվել է 5351.0 հազ. դրամով կամ կատարվել է 114.9 %-ով:
- Պետական տուրքեր 2225.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1457.5 հազ. դրամ, թերի է հավաքագրվել 767.5 հազ.դրամ կամ կատարվել է 65.5%-ով:
- Տեղական տուրքեր 4506.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 4907.0հազ. դրամ, գերակատարվել է 400.1 հազ. դրամով կամ կատարվել է 108.9 %-ով:
- Գույքի վարձակալություն՝ 76993.6 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 82386.7 հազ. դրամ, գերակատարվել է 5393.1 հազ. դրամով կամ կատարվել է 107.0 %-ով:
- Այլ եկամուտներ 6138.4 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 2035.4 հազ. դրամ, կամ կատարվել է 33.2 %-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում սեփական եկամուտների հավաքագրումը 100 տոկոս և ավելի ցուցանիշներով են կաատարել՝

	Համայնքի անվանումը	**Սեփական եկամուտներ տոկոսներով**
1	Եղեգնաձոր	102.0
2	Արենի	105.3
3	Աղավնաձոր	116.6
4	Աղնջաձոր	169.4
5	Արտաբույնք	108.8
6	Գետափ	173.4
7	Մալիշկա	107.8
8	Շատին	122.2
9	Հերմոն	100.7
10	Հորս	105.9
11	Չիվա	119.2
12	Ռինդ	122.3
13	Սալլի	212.6
14	Վարդահովիտ	108.7
15	Ելփին	100.4
16	Քարագլուխ	162.2
17	Զառիթափ	103.9
18	Ջերմուկ	106.3

100 տոկոսից ցածր ցուցանիշներով են կատարել՝ Հորբատեղ, Գողթանիկ, Եղեգիս, Վերնաշեն, Գլաձոր, Ագարակաձոր, Արփի, Գնիշիկ, Թառաթումբ, Խաչիկ, Վայք համայնքները:

Թվով 11 համայնքներ, որոնք չեն կատարել, թերացել են սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում, խնդրում ենք լրջորեն զբաղվեն, լուրջ հետևություններ անեն և գործուն միջոցներ ձեռնարկեն իրենց բյուջեին ամրագրված սեփական եկամուտների կատարման մասով:

Ուզում եմ անդրադառնալ նաև խոշորացված համայնքներում նախկին և ներկա աշխատողների թվերի և հաստիքային միավորների և աշխատավարձի ֆոնդերի վերլուծությանը:

Նշեմ, որ **<u>Եղեգնաձորի տարածաշրջանի 25</u>** համայնքներում հաստիքային միավորների թիվը 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ նվազել է 16 մարդով, հաստիքային միավորների թիվը 21 հաստիքով, տնտեսված աշխատավարձի ֆոնդը կազմել է 41129.0 հազ. Դրամ:

<u>Եղեգնաձորի համայնքնապետարանում</u> հաստիքային միավորները մնացել են նույնը՝ 109 հաստիք, սակայն դրույքաչափերի փոփոխության հետևանքով աշխատավարձի ֆոնդն ավելացել է 627.4 հազ.դրամով:

<u>Վայքի համայնքնապետարանի</u> նախորդ տարվա 173 աշխատակիցը մնացել է նույնը, սակայն փոփոխության է ենթարկվել հաստիքային միավորները և դրույքաչափերը, նախորդ տարվա 148.8 հաստիքային միավորը 2017թվականին ավելացել է 9 հաստիքով և կազմում է 157.8 հաստիքային միավոր, որի հետևանքով աշխատավարձի ֆոնդը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12698.6 հազ. դրամով:

<u>Ջերմուկի համայնքնապետարանի</u> նախորդ տարվա 170 աշխատակիցները 2017 թվականին դարձել են 171 աշխատակից, սակայն դրույքներն ավելացել են 14-ով, ինչպես նաև ավելացել է 10 պայմանագրային աշխատողներ, որի հետևանքով աշխատավարձի ֆոնդն ավելացել է 58251.5 հազ.դրամով:

<u>Զառիթափի համայնքնապետարան.</u> 2016թվականին աշխատողների թվաքանակը եղել է 101 մարդ, դրույքները 89.7 հաստիք, 2017թվականին աշխատակիցների թվաքանակը կրճատվել է 8 մարդով, իսկ դրույքը մեկով, սակայն դրույքաչափերի բարձրացման հետևանքով աշխատավարձի տարեկան ֆոնդն ավելացել է 9808.3 հազ. դրամով:

ՄԱՐԶԽՈՐՀՈՒԴՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է՝

Մարզի համայնքների ղեկավարներին .

1/ Ձեռնարկել գործուն միջոցներ Ձեր համայնքների 2017 թվականի բյուջեներին ամրագրված, ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային սեփական եկամուտների հավաքագրումն ապահովելու ամբողջությամբ, բյուջեով նախատեսված ծավալներով:

2/ Այն համայնքներին, որոնք իրենց բյուջեներում նախատեսել են այլ եկամուտներ խիստ ուշադրություն դարձնեն այդ եկամուտների հավաքագրման ընթացքին, քանի որ վերջինիս ցածր կատարողականի արդյունքում բավականին ցածր է լինում մարզի սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը:

3/ Ուշադրություն հրավիրել հաստիքային միավորների ավելացման և դրա հետևանքով աշխատավարձերի ֆոնդերի ավելացման վրա, քանի որ խոշորացման արդյունքում ավելի շատ հաստիքային միավորներ պետք է կրճատվեն և տնտեսված գումարները նպատակաուղղվեն խոշորացված համայնքներում առկա խնդիրների լուծմանը և ծրագրերի ֆինանսավորմանը:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը, ով նշեց, որ ամփոփելով մարզի համայքների տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների կատարման ընթացքը 01.04.2017 թվականի կտրվածքով, արձանագրում ենք, որ սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 104.8 տոկոսով:

Ուզում եմ հատկապես անդրադառնալ այն թվով 11 համայնքներին, որոնք թերացել են սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում, նշելով որ թերակատարումները հիմնականում հողի հարկի և վարձավճարի, ինչպես նաև այլ եկամուտների գծով են առաջացել: Ուստի առաջարկում եմ համայնքի ղեկավարներին խիստ և հետևողական ուշադրություն դարձնեն սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին, հիմնական ուղղությունը սևեռելով չկատարված եկամտատեսակների վրա, ուսումնասիրելով չկատարման պատճառները:

Կից ներկայացնում եմ թվով 11 համայնքների ցանկը, որոնք թերացել են սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում:

Ուզում եմ անդրադառնալ նաև խոշորացված համայնքներում նախկին և ներկա աշխատողների թվերի և հաստիքային միավորների և աշխատավարձի ֆոնդերի վերլուծությանը:

Նշեմ, որ **<u>Եղեգնաձորի տարածաշրջանի 25</u>** համայնքներում հաստիքային միավորների թիվը 2017 թվականին 2016 թվականի համեմատությամբ նվազել է 16 մարդով, հաստիքային միավորների թիվը 21 հաստիքով, տնտեսված աշխատավարձի ֆոնդը կազմել է 41129.0 հազ. Դրամ:

<u>Եղեգնաձորի համայնքապետարանում</u> հաստիքային միավորները մնացել են նույնը՝ 109 հաստիք, սակայն դրույքաչափերի փոփոխության հետևանքով աշխատավարձի ֆոնդն ավելացել է 627.4 հազ.դրամով:

<u>Վայքի համայնքապետարանի</u> նախորդ տարվա 173 աշխատակիցը մնացել է նույնը, սակայն փոփոխության է ենթարկվել հաստիքային միավորները և դրույքաչափերը, նախորդ տարվա 148.8 հաստիքային միավորը 2017թվականին ավելացել է 9 հաստիքով և կազմում է 157.8 հաստիքային միավոր, որի հետևանքով աշխատավարձի ֆոնդը նախորդ տարվա համեմատ ավելացել է 12698.6 հազ. դրամով:

<u>Ջերմուկի համայնքապետարանի</u> նախորդ տարվա 170 աշխատակիցները 2017 թվականին դարձել են 171 աշխատակից, սակայն դրույքներն ավելացել են 14-ով, ինչպես նաև ավելացել է 10 պայմանագրային աշխատողներ, որի հետևանքով աշխատավարձի ֆոնդն ավելացել է 58251.5 հազ.դրամով:

<u>Զառիթափի համայնքապետարան.</u> 2016թվականին աշխատողների թվաքանակը եղել է 101 մարդ, դրույքները 89.7 հաստիք, 2017թվականին աշխատակիցների թվաքանակը կրճատվել է 8 մարդով, իսկ դրույքը մեկով, սակայն դրույքաչափերի բարձրացման հետևանքով աշխատավարձի տարեկան ֆոնդն ավելացել է 9808.3 հազ. դրամով:

,,Գարնան գյուղատնտեսական աշխատանքների ընթացքը մարզի համայնքներում,, զեկուցմամբ հանդես եկավ աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Ներսիսյանը ,ով նշեց, որ 2017թ գյուղատնտեսական աշխատանքների համար պարարտանյութերի և սերմացուների անհրաժեշտ քանակության մասին հայտերը համաձայն համայնքներից ստացված վճարունակ պահանջարկի՝ ներկայացվել է գյուղատնտեսության նախարարություն.

- Ազոտական պարարտանյութ 541.5տ /+81.65/
- Կալիումական պարարտանյութ 6.95տ /+1.15/
- Ֆոսֆորական պարարտանյութ 7.76տ /+3.76/

Սերմեր

- Գարնանացան ցորեն 29.2տ
- Գարնանացան գարի 80
- Հնդկացորեն 0.85տ
- Ոլոռ 0.7տ
- Սիսեռ 1.6
- Ոսպ 0.25տ
- Եգիպտացորեն 0.02տ
- Առվույտ 1.42տ
- Կորնգան 5.63տ

Այս պահի դրությամբ ներկրվել է՝

- **Պարարտանյութ՝**

ազոտական	364.85տ
Ֆոսֆորական	4.9
Կալիումական	6.45

- **Սերմեր՝**

գարնանացան ցորեն՝	2.25տ
գարնանացան գարի	29.973տ
առվույտ	0.115տ
կորգան	1.45տ
սիսեռ	0.546տ
հնդկացորեն	0.02տ

Ձմռան և վաղ գարնանային ցրտահարությունների պատճառով վնասվել են մարզի խաղողի ու պտղատու այգիները/ նախնական 40 տոկոսով/:Գործող 7 հակակարկտային կայանները բավարար չեն կարկտահարության դեմ պայքարի աշխատանքներ կազմակերպելու համար, կարկտահարության վնասները մեղմելու նպատակով անհրաժեշտ են առնվազն 30 կայաններ:

2017 թվականի ապրիլի 28-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 220 գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 234 000 000 դրամ գյուղ նշանակության վարկեր, որից 45 տնտեսության 45 000 000 դրամ սուբսիդավորված /14%-6% /, ոչ սուբսիդավորված՝ 139 տնտեսությունների տրվել է 139 500 000 դրամ/18%/ , դոլարով՝ 36 տնտեսություն 100 000 /15%/

2017 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19755 գլուխ խոշոր եղջերավոր անասուն /-2487/, որից կովեր՝ 8419 /-1237/ գլուխ, մանր եղջերավոր՝ 16808 (-4883/, խոզեր՝ 2490 գլուխ (-137), թռչուններ՝ 66706թև (-49851) և մեղվաընտանիք՝ 23189/+619/ փեթակ:

Վարչության կողմից սահմանված ժամկետներում համակարգվում է պետական պատվերով նախատեսված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումների իրականացումը/կանխարգելիչ՝ սիբիրախտ, դաբաղ, էմկար, խոզերի և թռչունների ժանտախտ ,ախտորոշիչ՝ բրուցելյոզ, տուբերկուլյոզ/ :

147 ֆերմերային տնտեսություններից 118-ը զբաղվում է անասնապահությամբ /ընդ. 3176գ խոշոր եղջրավոր և 5346 գլուխ մանր եղջրավոր, իսկ 28-ը՝ հողագործությամբ /ընդ. 1324հա/:

Եղեգնաձորի ՋՕԸ-ն ավարտելով նախապատրաստական բոլոր աշխատանքները պատրաստ է ոռոգման ջուր մատակարարել մարզի հողօգտագործողներին համաձայն ջրապահանջի:

2016թ.մարզի ընդհանուր ցանքային տարածությունը կազմել է 6851 հա, որը նախորդ տարվա համեմատ ավել է 1138 հա-ով: Կանխատեսվում է 2017թ կատարել 7290հա ցանք, որի վերաբերյալ համապատասխան շրջաբերականով տեղյակ է պահվել համայնքների ղեկավարներին: Գարնան գյուղատնտեսական աշխատանքները ընթացքի մեջ են՝ կատարվել է մոտ 1000հա գարնանացան, որը խիստ մտահոգիչ է;

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, իսկ հինգ կաթ մթերող և վերամշակող ընկերությունները / Սալլի <<Սելիմ>>ՍՊԸ, Ելփին<<Գերասիմ>>ՍՊԸ, Աղնջաձոր ,Գնդեվազ <<ԷԿՈֆարմ>> ՍՊԸ, Եղեգնաձոր<<Գոլդեն Գոուլթ>>/ 1300տ կաթ, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի, բանջարեղենի և կաթի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ:

Գործող հինգ չրանոցների և 15 սառնարանային տնտեսությունների արտադրական հզությունները թույլ են տալիս իրականացնել մարզի հողօգտագործողների կողմից արտադրված պտուղ բանջարեղենի իրացումը:

Մարզի 14 համայնքներում առկա են 44 ջերմոցներ, 2,2 հա ընդհանուր տարացքով, որոնց միջոցով կանխատեսվում է արտադրել մոտ 100տ բանջարեղեն:

Առկա են 24 կոոպերատիվներ, որոնց անդամների ընդհանուր թիվը 1140 մարդ է : Կոոպերատիվներն ունեն հետևյալ ուղղվածությունը. չրի արտադրություն - 1, անասնապահություն-7, մրգի սառնարանային պահպանություն –7, բուսաբուծություն-2, կաթի մթերում և վերամշակում - 3, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկում -4:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզին հատկացվել է 56կգ ռոդիֆակում թունանյութ, որով 11 համայնքներում /Արփի, Արենի, Աղավնաձոր, Եղեգնաձոր, Մալիշկա, Չիվա, Խաչիկ, Ազատեկ,Փոռ, Արին, Զեղեա/ իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ /700հա/:

Մարզում առկա է 424 միավոր գյուղ տեխնիկա, որից սարքին՝ 301-ը/71 վարի տրակտոր, 23 կոմբայն /: 2010-2017թթ մարզ է ներկրվել 54 միավոր գյուղ տեխնիկա, 54 միավոր գյուղ. գործիքներ:

Զեկուցման շուրջ ծավալված **մտքերի փոխանակությանը մասնակցեցին**՝ Արենիի, Խաչիկի և Զառիթափի համայնքների ղեկավարները վերջիններս անդրադարձան իրենց համայնքներում իրականացվող աշխատանքներին,առկա խնդիրներին, դեռևս չստացած սերմացուի, պարարտանյութերի ու դիզելային վառելանյութի հարցերին:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ նախագահողը, ով նշեց, որ չնայած 2017թ հունվար-փետրվարյան ցրտերին՝ հողի մշակը վաղ գարնանից վերսկսել է աշխատանքները և ամեն ինչ անում է ցրտահարության հետևանքները հաղթահարելու համար:ՀՀ կառավարության կողմից այս տարի ևս կսուբսիդավորվի գյուղատնտեսությունը՝ արդեն մատչելի գներով մարզ են ներկրվել գարնանացանի սերմացուն ու անօրգանական պարարտանյութերը, առաջիկայում կսկսվի դիզելային վառելանյութի ներկրումը:,,Եղեգնաձոր ՋՕ.. ընկերությունում ավարտվել են միջհամայնքային և ներհամայնքային ջրատարների նորոգումը, ավելին՝ Արփա գետի ներքին գոտում գյուղացիական տնտեսությունները ստանում են պահանջվող ոռոգմանը անհրաժեշտ ջուրը:Վերջում նախագահողը կոչ արեց համայնքների ղեկավարներին կանգնել գյուղացու կողքին և ըստ ամենայնի աջակցել գարնանացանի աշխատանքներին:

Հայտարարություններ՝

1. **,,Վերջին դաս միջոցառման մասին.. հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանը**: Վերջինս նշեց,որ 2017 թվականի մայիսի 26-ին ինչպես ողջ հանրապետության , այնպես էլ մարզի հանրակրթական դպրոցների ավարտական՝ 9-րդ և 12-րդ դասարաններում անց է կացվելու վերջին դաս միջոցառումը:Բանախոսը դիմելով մարզխորհրդին մասնակցող ուսումնական հաստատությունների տնօրեններին ու համայնքների ղեկավարներին, խնդրեց միջոցառման անցկացումը պահել ուշադրության կենտրոնում՝ ձեռնպահ մնալ ավելորդ ճոխություններից,բացառել դրամահավաքները,միջոցառումները անցկացնել ուսումնական հաստատություններում առանց ավելորդությունների, որպես ներդպրոցական հրաժեշտի ցերեկույթ:

2. **,,Շախմատ առարկայի դասավանդման դրվածքը մարզի հանրակրթական դպրոցներում.. հայտարարությամբ հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանը**:Նա նշեց , որ վերջերս մարզ էր այցելել ՀՀ շախմատի ֆեդերացիայի փոխնախագահ, գրոսմայստեր Ս. Լպությանը; Վերջինս այցելել է մարզի մի շարք հանրակրթական դպրոցներ և ուսումնասիրել ''Շախմատ''առարկայի ուսոցման դրվածքը, ինչը տեղիք է տվել լուրջ դժգոհության;Դիմելով դպրոցների տնօրեններին զեկուցողը առաջարկեց արմատապես փոխել ուսուցման դրվածքը, դպրոցներում վերապատրաստման եղանակով ունենալ այլընտրանքային շախմատի ուսուցիչներ:

3. **''Լավագույն մարզական ընտանիք միջոցառման մասին''հայտարությամբ հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Ղազարյանը**: Նա նշեց , որ շուրջ մեկ տասամյակ է, ինչ մարզում ՀՀ Նախագահի հովանու ներքո անց են կացվում լավագույն մարզական ընտանիք մարզական միջոցառումները, որի մարզային փուլի հաղթողները ամռանը մասնակցում են հանրապետական

փոպին:Այս տարի ևս մրցումների անցակացման կանոնադրությունը ուղարկվել է ինչպես հանրակրթական հաստատություններ, այնպես էլ համայնքապետարաններ:Մարզխորհրդի մասնակիցներին խնդրեց աջակցել մրցումների անցկացմանը:

4. **''Հանրակրթական դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվող սննդի անվտանգության նորմերի մասին'' հայտարարությամբ հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ Հ. Ավագյանը:**Վերջինս նշեց,որ սկսած 2016 թվականի հոկտեմբեր ամսից մարզային ծառայության կողմից իրականացվել է դիտարկվող օբյեկտների գույքագրում, իսկ արդեն՝ նոյեմբերից սկսել են դիտարկել ու ստուգել տնտեսվարողներին: Ի դեպ, սպասվող ստուգումների մասին ''Սննունդ. ԱՄ'' կայքում ծանուցումներ են տեղադրվել:Ստուգումները իրականացվել են ըստ ոլորտների կաթի կամ հացի արտադրություն սանիտարական կամ սննդի անվտանգության նորմերի խախտումների հիմքով, ՀՀ վարչական իրավախախտումների օրենսգրքով սահմանված հոդվածների իրավանորմերով կասեցվել կամ արգելվել են հանրային սննդի երեք օբյեկտների, ջերմուկ հանքային ջրի մեկ արտատրամասի, Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեի, ինչպես նաև Գնդեվազ և Զառիթափ համայնքների մանկապարտեզների գործունեությունը:Բանախոսը նշեց, որ թեև մարզում կան երկու սպանդանոցներ, սակայն դրանք չեն գործում, մինչդեռ ՀՀ կառավարության որաշմամբ ս/թ մայիսի 1-ից մսեղիքը պետք է գնել միայն սպանդանոցից:Գնդեվազի միջնակարգ դպրոցի տնօրեն տիկին Ա. Թունյանը ծառայության պետին հարց ուղղեց դպրոցական բուֆետի փակման և կազմված արձանագրության մասին, որով առաջարկվում է մինչև ս/թ մայիսի 29-ը վերացնել արձանագրված թերությունները:

Հարցին պատասխանեց ՀՀ ԳՆ սննդամթերքի անվատանգության պետական ծառայության սննդամթերքի արտադրության վերահսկողության բաժնի պետ Ա, Առուշանյանը:Վերջինս դիմելով մասնակիցներին հայտարարեց որ իրենց ծառայությունը լինելու է հետեվողական և արգելելու է շահագործել բոլոր այն օբյեկտները որտեղ կան սանիտարասննդային նորմերի շեղումներ՝ բացակայում է հոսող տաք և սառը ջուրը, սննդամթերքը չունի համապատասխան սերտիֆիկատ, բուֆետներում առկա չի սառնարան, աշխատողները չունեն սանգրքույկներ և այլն;Անդրադառնալով Թունյանի հարցին՝ ակտով նախատեսված ժամկետի երկարացմանը, նշեց, որ անհրաժեշտ է լրացուցիչ դիմում ներկայացնել մարզային կենտրոնի տնօրենին;

Վերջում բաժնի պետը անդրադառնալով սպանդանոցների գործունեությանը, նշեց, որ 2018 թվականից ազգաբնակչությանը կվաճառվի միայն սպանադանոցային ելքի մսեղիք:Իրենց ծառայության ներկայացմամբ, շուտով կառավարությունը կընդունի տրանսպորտային միջոցների սանիտարական նորմեր, որի առկայության դեպքում կթույատրվի տեղափոխել սննդամթերքը:

Վերջում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանը շնորհակալություն հայտնեց մարզխորհրդի անդամներին ու մասնակիցներին օրակարգային հարցերի քննարկումներին ակտիվ ու շահագրգիռ մասնակցելու համար::

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**